



ԵՐԿՈՒԾԱԲԹԻ, 5 ՅՈՒԻՍ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ԵՐԱՆԵԼԻ Է ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՊՈՐՂԸ

Երանի անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,  
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաձայն:  
Երանի անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն,  
ամբողջ սրտով անոր կը հնազանդին.  
որոնք չարիք չեն գործեր,  
այլ՝ անոր ճամբուն մէջ կը քայլեն:  
Դուն հրամայեցիր  
բժախնդրութեամբ գործադրել հրահանգներդ:  
Ինչքան կ'ուզեմ անշեղ ընթացքով  
գործադրել քու կանոններդ:  
Այն ատեն ամօթ պիտի չզգամ ամէն անգամ որ  
ուշադրութիւնս դարձնեմ քու պատուէրներուդ:  
Որքան կը սորվիմ արդար դատաստաններդ,  
այնքան կը գոհաբանեմ քեզ անկեղծ սրտով:  
Պիտի գործադրեմ քու կանոններդ,  
բնաւ, բնաւ մի լքեր չիս:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ



ԱՌԱԿԱՑ 12 ԳԼՈՒԽ

## ԻՍՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՄՏՈՒԹԻՒՆ 12:1-8

Որքան կը շարունակենք խորանալ, այնքան առաւել եւս ցոյց կը փրօտի բարիքները իմաստութեան: Պօղոս Առաքեալ փեղին կը յիշեցնէ իր աշակերտին Տիմոթէոսի ըսելով. «Մանուկ հասակէդ գիպես Աստուծոյ շունչով գրուած գիրքերուն ոչ միայն արժէքը, այլ անոր դերը եւ փեղը ու օգտակարութիւնը կեանքիդ մէջ: Ճշմարտութիւնը կ'ուսուցանէ, սխալը կը հերքէ, մարդս ճիշդ ճամբու մէջ կը դնէ, արդար կեանքի դաստիարակութիւնը կու փայ, որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կարարեալ ըլլայ, ամէն քրիստոսէական բարի գործերու պատրաստ» 3:14-17: Ահա նոյն միտքն է որ Առակաց գիրքի 12 գլուխը կը սկսի ըսելով. «Խրատ սիրողը գիտութիւն կը սիրէ, բայց յանդիմանութիւն արողը անմիտ է» 1հմր: Այս իսկ է այսօրուան պարագան: Մարդը որքանով պատրաստ է խրատ լսելու եւ մտիկ ընելու, որովհետեւ յաճախ այդ խրատները հաճելի չեն, մոռնալով սակայն որ այդ խրատները կեանքի մը փորձառութեան լոյսին փակ եղած դասեր են, բայց որովհետեւ մարդ արարածը կ'ուզէ կարծէք ինք անձամբ ունենալ փորձառութիւնը յաճախ կը դժուարանայ ականջ փայլու խրատին:

2 հմր կու գայ յիշեցնելու եւ ըսելու, թէ «Բարի մարդը Տիրոջմէ շնորհք կը ստանայ, իսկ նենգաւոր մարդը դատապարտութիւն»: Որոշ է որ այն անձը որ խրատ կը լսէ, մտիկ կ'ընէ ու ըստ այնմ իր կեանքի ուղին կը շրկէ, այդպիսիին համար ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ օրհնութիւնը, իսկ հակառակ մարդուն համար ալ ուրիշ բան չպատահիր եթէ ոչ դատապարտութիւն: Որովհետեւ Աստուծոյ խրատ ըսելով կը նշանակէ Աստուծոյ պատուիրաններուն համաձայն ապրիլ, եւ Աստուծոյ պատուիրանները ուրիշ բան չեն եթէ ոչ լոյս եւ ճրագ, կեանք, ու մեզ դէպի յաւիտենականութիւն փանող ճանապարհ:

3 հմր, մէկ այլ ուրիշ արտայայտութիւնն է նոյն մտքին, որ անիրաւութեամբ շահուած որեւէ մէկ բան հաստատուն չէ, այլ կը նմանի այն փունին որ աւազի վրայ շինուած է, իսկ արդարութեամբ ձեռք բերուած որեւէ մէկ բան հաստատուն է, որովհետեւ հիմքը Քրիստոսն է ժայռն է:

4 հմր հեղափոխական է, ուր կը ներկայացնէ փան մը, ընդամենին մը գլխաւոր դերակատարները, այր եւ կին: Աստուածաշունչ Մարեանը նոյն միտքը քանի-քանի առիթներով կը ներկայացնէ, եւ սա ցոյց կու փայ կարեւորութիւնը ընդամենին հասկացողութեան, ու մանաւանդ այդ ընդամենին գլխաւոր դերակատարներուն փեղը ու անոնց ունեցած ազդեցութիւնը փան ու փան միւս անդամներուն վրայ, այսինքն՝ երեխաներուն: «Առաքինի կինը իր ամուսնոյն պսակ է, իսկ նախապիւնք բերող կինը ոսկորներուն փրօտութիւն»: Տաօք սրբի այսօր բոլորովին փարբեր է պատկերը: Այսօր սխալ կը հասկցուի Աստուածաշնչական բառի մը գործածութիւնը փրօտած այր եւ կնոջ: Երբ կ'ըսուի կինը հնազանդեցէք, այրեր փրօտեցէք: Այնպէս կը թուի կարծէք սրբուկի եւ փրօտի դերերու մասին ըլլար խօսքը, սակայն նոյն մտքով Պօղոս Առաքեալ կը ներկայացնէ նախ յիշեցնելով թէ այդ բառերուն փակ Քրիստոսն է: Եկեղեցի հասկացողութիւնները կան ու պէտք է ըլլան: Այդ իսկ իմաստով եթէ կինը իրեն իբրեւ գլուխ նկատի կ'ունենայ իր ամուսինը, ահա այն արեւն ինք այդ գլխուն համար կը դառնայ պսակ: Այնպէս ինչպէս եթէ երբեք այր մարդը իրեն համար նկատի ունենայ Քրիստոսը իբրեւ գլուխ, ահա այն արեւն այր մարդը ինքզինք ըստ այնմ կը պատկերացնէ իր պարտականութիւններով: Ահա ճիշդ անոր համար է որ Պօղոս Առաքեալ մնայուն կը յիշեցնէ ըսելով. «Ձեր հաւաքի ախոյեանին նայեցէ՛ք Յիսուս Քրիստոսի»: Այլապէս եթէ այսպիսին չեն դերակատարները, ապա քառասային վիճակ մըն է որ կը փրօտ այդ փան մէջ, ուստի այնքան ապրող երեխաներն ալ քառասային վիճակին մէջ մեծնալով նոյնը պիտի սորվին: Որովհետեւ առաքինի կինը գլխաւոր օրինակը կը հանդիսանայ այդ փան, ուր եւ երեխաները այդ օրինակը ընդօրինակելով այդպէս իրենք եւս կը սկսին այդ ձեռք ապրիլ իրենց հաւաքի կեանքը:

5-7 հմրները զուգ կու փան հետեւանքը, արդիւնքը ամբարիշտին ու արդարին, արդարին մտածումներուն ու ամբարիշտին խորհուրդներուն: Ամբարիշտին խօսքերը, ու արդարին խօսքերը:

Ահա այսպէս ցոյց կու փայ երկու խումբերը, ու մանաւանդ՝ անոնց ունեցած արդիւնքը: Ինչպէս առիթով մը ըսուեցաւ, որ մի գուցէ այդ բոլորը անմիջապէս չտեսնենք, կամ չերեւին, սակայն, անպայմանօրէն անոնց արդիւնքը ուշ կամ կանուխ կը յայտնուի: Որովհետեւ մանաւանդ այսօրուան մարդուն համար երբ ամէն ինչ կ'ուզէ անոր արդիւնքը տեսնել անմիջապէս, իսկ երբ այս խօսքերը իբրեւ խրատ կը փրօտին, որմէ կը զգուշացնէ թէ ինչպիսի հետեւանքներ կրնան ունենալ այդպիսիները, անմիջապէս կրնան ըսել, որ այդպէս չէ, եւ կը սկսին օրինակներ փայլ, թէ այդպիսի մարդիկ, ընդհակառակը շար աւելի լաւ ու բարձր կեանք կը կ'ապրին: Սակայն, խօսքը այսքան ոչ միայն այսօրուան համար է, այլ՝ գալիքին: Չմոռնանք, որ նաեւ անոր արդիւնքը կրնանք հիմա ալ տեսնել, չսպասել մինչեւ աւարտին հասնելու: